Վերոնշյալ դիտարկումներից ելնելով՝ առաջարկվում է ստեղծել կրիպտոարժույթի մի նոր տեսակ, որը սկզբունքորեն կտարբերվի գոյություն ունեցողներից, որոշակի կախվածություն կունենա միջազգային ֆինանսական կառույցներից:

Անհրաժեշտ է նաև կրիպտոարժույթի վերահսկման լծակներ ստեղծել, օրենսդրորեն կարգավորել մայնինգը՝ որպես ձեռնարկատիրական գործունեության տարր:

Նման մոտեցումը, կարծում ենք, կապահովի կրիպտոարժույթի կայունությունը և զարգացումը: Այն ավելի հուսալի կդառնա:

**ДАВИД АКОПЯН**

## КРИПТОВАЛЮТА И ЕЕ ВИДЫ. МАЙНИНГ

***Ключевые слова:*** *криптовалюта, майнинг, биткойны, сатоши, биткоин кэш, майнинг ферма.*

*Криптовалюта это своего рода цифровая валюта, создание и контроль которой основаны на криптографических методах. Как правило, криптовалютный расчет децентрализуется. Концепция децентрализованной платежной системы приставил Накамото в 2008 году 31 октября. Его основными принципами являются конфиденциальность всех участников, защита от мошенничества и независимости от контролирующих органов. В 2017 году их число превысило 2000.*

DAVID HAKOBYAN

## CRYPTOCURRENCY AND ITS TYPES. MINING

*Key words:* *cryptocurrency, mining, bitcoins, satoshi, bitcoin cache, mining farm.*

*Crypto is a kind of digital currency, the creation and control of which is based on cryptographic methods.As a rule, the crypto-currency calculation is decentralized. The concept of decentralized payment system Nakamoto has dropped in 2008 October 31. Its main principles are the confidentiality of all participants,protection against fraud and independence from controlling bodies.In 2017 their number exceeded 2000.*

**ԿԼԱՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ**
*Կառավարում ըստ ոլորտների,*
*բակալավրիատ, 2-րդ կուրս*

## ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

**Հիմնաբառեր**. *աղքատություն, գործազրկություն, եկամուտներ, պետություն*

*Հոդվածում ներկայացված են աղքատությունը, դրա տեսակները, ցուցանիշները, ազդող գործոնները ու չափման մեթոդները, ինչպես նաև վերլուծություններ և աղքատության մակարդակը կրճատելու վերաբերյալ լուծումներ:*

*Գլոբալ և արդիական այս խնդիրը հոդվածում ներկայացված է Հայաստանի Հանրապետության օրինակով: Հայաստանում, ըստ Ազգային վիճակագրական ծառայության, աղքատ է բնակչության ավելի քան 29,4%-ը (ըստ 2016 թ. տվյալների), և աղքատության խնդրի լուծումը առաջնային նպատակներից է:*

1991 թ. անկախացումից հետո Հայաստանը կանգնեց մեծ տնտեսական խնդիրների առջև: Փլուզվեց պլանային մոդելը, և պետությունը որոշում ընդունեց անցում կատարել շուկայական հարաբերությունների, պետական սեփականությունը դարձավ մասնավոր, ինչին բնակչությունը սոցիալապես և հոգեպես դեռ պատրաստ չէր:

1988 թ. երկրաշարժն էլ գրեթե արմատախիլ էր արել տնտեսությունը: Հայաստանը գտնվում էր տնտեսական և էներգետիկ շրջափակման մեջ:

Տնտեսական աճ սկսեց գրանցվել 1994 թվականից: Աղքատության զգալի նվազեցում նկատվեց 2004–2007 թթ. (53.5%-ից 30%),[1] 2008–2009 թթ., պայմանավորված համաշխարհային ճգնաժամով, ցուցանիշը նորից բարձրացավ, այնուհետև սկսեց աստիճանաբար նվազել:

Աղքատությունը կարևոր և արդիական խնդիր է նաև այսօր: Հայաստանի Հանրապետությունում, ըստ 2006 թ. ցուցանիշների, աղքատ է համարվում բնակչության ավելի քան 29.4%-ը: Աղքատությունը ազդում է ողջ երկրի տնտեսության և կյանքի որակի վրա, դրա կրճատումը երկրի ռազմավարության կարևոր և անբաժան մասն է:

Ուսումնասիրությունների տվյալները վերցված են Ազգային վիճակագրական ծառայության, Համաշխարհային բանկի և այլ պաշտոնական զեկույցներից և աղբյուրներից:

Աղքատությունը կարևոր ցուցանիշ է յուրաքանչյուր երկրի համար: Դրա վերաբերյալ կան բազմաթիվ սահմանումներ և հայեցակարգեր: Այժմ գրեթե բոլոր երկրներում հիմք են ընդունում Համաշխարհային Բանկի Զեկույցներում ներկայացված սահմանումները: Համաշխարհային բանկի The Definitions of Poverty[2] զեկույցի համաձայն՝ աղքատությունը կապված է.

1) եկամուտների և սպառման ծախսերի ցածր մակարդակի հետ, որը կարող է արտահայտվել անձնական գույքի բացակայությամբ, նյութական բարիքներից օգտվելու անկարողությամբ,

2) կրթական, առողջապահական, մշակութային բարիքներից օգտվելու անկարողության հետ,

3) ձայնի իրավունք չունենալու հետ,

4) անպաշտպանվածության հետ՝ բնական աղետների, հիվանդությունների, աշխատանքը կորցնելու դեպքերում:

Աղքատության վերաբերյալ բազմաթիվ սահմանումներից մեկը հետևյալն է. աղքատությունը պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ միջոցների, բնականոն ապրելակերպ ունենալու և սննդամթերքի ձեռք բերման հնարավորության բացակայությունն է կամ էլ անպաշտպանվածությունը: Աղքատ կարող է համարվել այն մարդը կամ ընտանիքը, որը չի կարողանում ապահովել իր մտավոր և ֆիզիկական գործունեությունը և իր ընտանիքի կենսական պահանջները: Աղքատությունը հետևանքն է տնտեսական և սոցիալական անհավասարության:

Տարբերում են նաև «բացարձակ, հարաբերական և սուբյեկտիվ աղքատություն» հասկացությունները:

---

[1] Տե՛ս Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր http://www.gov.am/files/library/29.pdf:

[2] http://siteresources.worldbank.org/INTPOVERTY/Resources/335642-1124115102975/1555199-1124115187705/ch2.pdf

Բացարձակ աղքատություն համարվում է այն, երբ եկամուտները ցածր են սպառողական կենսապահովման նվազագույնից, այսինքն՝ սպառողական զամբյուղից:

Հարաբերական աղքատություն ասելով նկատի է առնվում նվազագույն կենսապայմաններ ունեցողների և առավել ապահովվածների կենսամակարդակների տարբերությունը:

Սուբյեկտիվ աղքատության դեպքում յուրաքանչյուր խմբին պատկանող մարդ իր սուբյեկտիվ մոտեցումն է ցուցաբերում աղքատության վերաբերյալ.

«Մի հարցրեք ինձ, թե ինչ է աղքատությունը, երբ հանդիպել եք դրան իմ տնից դուրս: Նայեք իմ տանը և հաշվեք դրա անցքերի քանակը, նայեք իմ պարագաներին և հագուստին, որոնք ես կրում եմ: Նայեք ամեն ինչին և գրի առեք,ինչ տեսնում եք: Այդ ամենը աղքատություն է:

Աղքատ մարդ՝ Քենիա»:[1]

Աղքատության ցուցանիշները հաշվելու համար օգտվում են «նյութական» և «ոչ նյութական աղքատություն» հասկացություններից:

Ոչ նյութական աղքատության բնորոշիչներն են վատ առողջությունը, կրթական ցածր մակարդակը կամ անգրագիտությունը, սոցիալական անտեսվածությունը կամ մերժվածությունը, անպաշտպանվածությունը, իրավունքների և խոսքի ազատության անկիրառելիությունը, այն է՝ գործնականում սեփական խնդիրները բարձրաձայնելու անկարողությունը: Հայաստանում աղքատության չափման հիմնական կողմնորոշիչը նյութական աղքատությունն է:

ՀՀ-ում աղքատության ցուցանիշները հաշվարկում է Ազգային վիճակագրական ծառայությունը, աղքատության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը մշակել է Համաշխարհային բանկը: Առաջին անգամ այն ներդրվել է 1996 թ., այնուհետև վերանայվել է և կատարելագործվել 2004 և 2009 թթ.: Աղքատության գնահատումը ենթադրում է երեք բաղադրիչ.

- բարեկեցության կամ կյանքի պայմանների բաշխվածություն,
- աղքատության գիծ, որից ներքև գտնվող անհատները համարվում են աղքատ,
- աղքատության չափման միավոր:

Բարեկեցության մակարդակը գնահատելու համար ԱՎԾ-ն օգտագործում է սպառման ագրեգացված ցուցանիշը, այսինքն՝ հիմք են հանդիսանում սպառման ծախսերը, ոչ թե եկամուտները: Եկամուտների մասին տեղեկատվությունը պակաս վստահելի է, քանի որ եկամուտները հաճախ թաքցվում կամ ավելի պակաս են նշվում հարցվողների կողմից, ինչպես նաև, եկամուտների որոշ տեսակների բնորոշ է սեզոնայնությունը:

ԱՎԾ մեթոդաբանության համաձայն՝ աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին գծից (40867 դրամ), շատ աղքատ՝ երբ ցածր է եղել աղքատության ստորին գծից (33 418 դրամ), իսկ ծայրահեղ աղքատ կամ թերսնված՝ երբ ցածր է եղել աղքատության պարենային գծից (23313 դրամ):

[1] http://siteresources.worldbank.org/INTPOVERTY/Resources/335642-1124115102975/1555199-1124115187705/ch2.pdf

Հայաստանում աղքատ է բնակչության 29,4%-ը, 1,8%-ը ծայրահեղ աղքատ է, 8,0%-ը՝ շատ աղքատ (առանց ծայրահեղ աղքատների), իսկ մնացած 19,6%-ը ուղղակի աղքատ է: 2016 թ. աղքատների ընդհանուր թվաքանակը կազմել է շուրջ 880000 մարդ, որից շատ աղքատների թվաքանակը (ներառյալ ծայրահեղ աղքատները)՝ շուրջ 295000, իսկ ծայրահեղ աղքատների թվաքանակը՝ շուրջ 54000 մարդ:




**Գծապատկեր 1.** ***Աղքատության ցուցանիշները ըստ մարզերի***

Աղքատության խորությունը հաշվարկվում է աղքատ բնակչության հաշվով և ցույց է տալիս աղքատության պակասուրդը, այսինքն՝ թե որքանով է աղքատների միջին սպառումը ցածր աղքատության գծից:

Աղքատության սրությունը արտացոլում է աղքատների միջև սպառման անհավասարությունը: Աղքատության խորությունը 2016 թ. համար գնահատվել է 4.3%, իսկ աղքատության սրությունը՝ 1.1%:

2015 թ. համեմատ աղքատության մակարդակը նվազել է 0,4%-ային կետով: Սակայն 2016 թ., 2008-ի համեմատ, ընդհանուր աղքատության մակարդակը բարձր էր 1,8%-ային կետով:

**Աղյուսակ 1**

| | 2008թ | | | 2015թ. | | | 2016թ. | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ծայրահեղ աղքատ | Շատ աղքատ | Աղքատ | Ծայրահեղ աղքատ | Շատ աղքատ | Աղքատ | Ծայրահեղ աղքատ | Շատ աղքատ | Աղքատ | %-ը աղքատ բնակչության մեջ | Աղքատության խորություն | Աղքատության սրություն |
| Քաղաքային բնակավայրեր | 1.9 | 13.0 | 27.6 | 2.2 | 10.4 | 29.4 | 2.0 | 9.6 | 28.8 | 62.4 | 4.3 | 1.1 |
| *Ք.Երևան* | 1.1 | 8.1 | 20.1 | 2.0 | 8.3 | 25.0 | 1.9 | 7.8 | 24.9 | 28.2 | 3.9 | 1.1 |
| *Այլ քաղաքներ* | 2.8 | 18.2 | 35.8 | 2.4 | 12.8 | 34.4 | 2.1 | 11.6 | 33.2 | 34.2 | 4.6 | 1.2 |
| Գյուղական բնակավայրեր | 1.2 | 11.9 | 27.5 | 1.7 | 10.3 | 30.4 | 1.4 | 10.1 | 30.4 | 37.6 | 4.3 | 1.1 |
| **Ընդամենը** | **1.6** | **12.6** | **27.6** | **2.0** | **10.4** | **29.8** | **1.8** | **9.8** | **29.4** | **100** | **4.3** | **1.1** |

2004 թ. ներդրվել է Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը[1], ինչը թույլ տվեց 2004-2006 թթ. աղքատության մակարդակը

[1] http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=44725

53.5%-ից իջեցնել 30.4%-ի, սակայն 2008-2009 թթ. ճգնաժամից հետո տեմպերը կտրուկ նվազեցին: Այժմ նվազում է, սակայն դանդաղ տեմպերով:

Պետությունը աղքատությունը նվազեցնելու քաղաքականություն է վարում ինչպես նպաստների և կենսաթոշակների բարձրացմամբ, այնպես էլ հարկաբյուջետային քաղաքականությամբ, աշխատատեղերի ստեղծմամբ:

Աղքատության ցուցանիշը մեծապես կախված է տնտեսական աճից և եկամուտների բաշխումից: 2013-2016 թթ. արձանագրված տնտեսական աճը նախադրյալներ է ստեղծել կենսապայմանների բարելավման և աղքատության մակարդակի կրճատման համար: 2012 թ. համեմատ ՀՆԱ ցուցանիշն աճել է 10.66%-ով, իսկ աղքատության մակարդակը նվազել է 9.26%-ով: Սակայն, ՀՆԱ աճի տեմպը վերջին 3 տարիներին ընկել է. 2014 թ. 3.5%, 2015 թ.՝ 3.0% տնտեսական աճ:

Մեծ խնդիրներ կան՝ կապված եկամուտների բաշխման հետ: Երկրում կան ծայրահեղ հարուստներ և ծայրահեղ աղքատներ, ինչից կարելի է ենթադրել, որ եկամուտները բաշխվում են չափազանց անհավասարաչափ: Եթե համեմատենք 20% բարձր եկամուտ ունեցողների և 20% աղքատների եկամուտները, ապա կտեսնենք, որ առաջինը 32 անգամ գերազանցում է երկրորդին:

Եկամուտների անհամամասնական բաշխման պատճառներից մեկը կոռուպցիան է, որը մեծ դեր է խաղում տնտեսության զարգացման գործում: Աղքատության ցուցանիշը մեծապես կախված է նաև գործազրկությունից: Հայաստանում գործազրկությունը 2016 թ.կազմում էր 18,%: Գործազրկությունը և ցածր աշխատավարձը էապես են ազդում աղքատության մակարդակի վրա: Պետության գործառույթն այստեղ հիմնականում մասնավոր ընկերությունների և գործարարության համար նպաստավոր պայմանների ստեղծումն է և հարկային արդյունավետ քաղաքականությունը: Իսկ ցածր աշխատավարձերը հիմնականում կապված են աշխատանքի արտադրողականության հետ, որը կարելի է բարձրացնել՝ նոր տեխնոլոգիաներ ներդնելով և աշխատակիցներին վերապատրաստելով:

Աղքատություն ծնող մյուս պատճառը թերի կրթությունն է և կրթության անհասանելիությունը: Հայաստանում գրեթե ողջ բնակչությունը գրագետ է: 2011 թ. մարդահամարը ցույց տվեց, որ Հայաստանի բնակչության միայն 0,3%-ը գրաճանաչ չէ, սակայն բարձրագույն կրթությունը ոչ բոլորին է հասանելի:

Այժմ պետբյուջեով միջոցներ են նախատեսված 4,5 հազար ուսանողի ուսումը ֆինանսավորելու համար, ինչը թույլ կտա կրթությունը հասանելի դարձնել մի մասին:

Աղքատության ավելի բարձր ցուցանիշներ են արձանագրվում գյուղերում և փոքր քաղաքներում: Գյուղաբնակ երեխաների 82%-ը կարիքավոր է, մինչդեռ կարիքավոր է քաղաքաբնակների միայն 53%-ը: Եղանակային անակնկալների պատճառով երաշխավորված չէ գյուղացու կայուն եկամուտը, մեծ խնդիրներ կան՝ կապված ոռոգման համակարգի հետ: Պետությունը ներկայումս փորձում է նպաստել սուբսիդիաների և աջակցման ծրագրերի միջոցով:

Աղքատության նվազման գործում պետությունը ուղղակի ազդեցություն է ունենում նաև կենսաթոշակների և նպաստների միջոցով: Թեև սոցիալական

տրանսֆերտներին ուղղված համախմբված բյուջեի ծախսերը տարեցտարի ավելանում են, այնուհանդերձ, շարունակում են ՀՆԱ-ի նկատմամբ մնալ բավական սահմանափակ մակարդակում (2015 թ.՝ 7.8%): Սոցիալական տրանսֆերտները զգալիորեն նպաստում են աղքատության մակարդակի կրճատմանը: 2015 թ. սոցիալական տրանսֆերտները կազմել են Հայաստանի տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով ամսական ամբողջական եկամտի 16.7%-ը:

Այսպիսով, աղքատությունը անհրաժեշտ միջոցների, բնականոն ապրելակերպ ունենալու և սննդամթերքի ձեռք բերման հնարավորության բացակայությունն է: Այն առաջնային խնդիրներից է, որի լուծումը շատ կարևոր է տնտեսության համար: Գլոբալ այս խնդիրը չի շրջանցել նաև Հայաստանը, որտեղ աղքատ է բնակչության 29,4%-ը՝ կապված տնտեսական աճի, եկամուտների ոչ համամասնական բաշխման, գործազրկության, կրթության մակարդակի և մի շարք այլ հանգամանքների հետ:

Ինչպես ասվեց, եկամուտների անհամամասնական բաշխման պատճառներից մեկը կարող է լինել կոռուպցիան: Այն կարելի է արմատախիլ անել միայն օրենսդրական դաշտի և խիստ վերահսկողության միջոցով, ինչպես դա արեց Սինգապուրը, երբ Երրորդ աշխարհի երկրից դարձավ Առաջին աշխարհի երկիր: Վարչապետ Լի Կուան Յուն ստեղծեց մի հակակոռուպցիոն մարմին, որի անունն էր «Վարակիչ ագահության հետաքննության բյուրո»: Այն օժտված էր ինքնիշխան (ավտորիտար) իրավունքներով և կարող էր առանց դատավարության ստուգել կամ ձերբակալել ցանկացած քաղաքացու: Կաշառք վերցնելու համար շատ պաշտոնյաներ հայտնվեցին բանտում: Խուսափելու համար խրթին օրենքներից և բարդ ընթացակարգերից, որոնք նպաստում էին կոռուպցիային, երկրում բոլոր օրենքները առավելագույնս հեշտացվեցին, հատկապես՝ հարկային օրենքները:

Գործազրկության մակարդակը կրճատելու համար նույնպես կարող ենք օգտվել Սինգապուրի օրինակից. լինելով աղքատ երկիր, որտեղ բացակայում էին բնական ռեսուրսները, կարճ ժամանակում այն դարձավ տնտեսապես զարգացած ամենահարուստ երկրներից մեկը: Այստեղ հարկերից ազատվում և խրախուսվում էին ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ընկերությունները, որոնք գործում էին այնպիսի ոլորտներում, որոնք կառավարության կողմից դիտվում էին որպես գերակա: Կառավարությունը մեծապես կարևորում էր բնակչությանը բնակարանով ապահովելը: 1960-ականներին ստեղծվեց հիփոթեքային վարկավորման համակարգը, կտրուկ աճեց բնակարանային շինարարությունը: Արտասահմանյան, հատկապես՝ ամերիկյան ընկերությունների մուտքը Սինգապուր դրեց բարեկեցիկ ապագայի հիմքը երկրում՝ միևնույն ժամանակ լուծելով գործազրկության խնդիրը:

«Մենք ողջունում ենք յուրաքանչյուր ներդրողի, մենք պարզապես մեր կաշվից դուրս ենք գալիս, որ օգնենք յուրաքանչյուրին՝ սկսելու արտադրություն և հարթելու բիզնես ուղի». ասում է Լի Կուան Յուն իր From Third World to First[1] գրքում:

Աղքատությունը կարելի է կրճատել նաև՝ վերացնելով գյուղ–քաղաք խզվածությունը: Այժմ շատ գյուղեր, կարելի է ասել, կտրված են աշխարհից, ինչն ազդում է ապրանքաշրջանառության, եկամուտների վրա: Այդ տարան-

[1] Տե՛ս From Third World to First: The Singapore Story: 1965-2000, by Lee Kuan Yew:

ջատումը կարելի է վերացնել՝ արդյունավետ երթուղային ցանց ներդնելու միջոցով: Գյուղ–քաղաք խզումը ազդում է նաև հաղորդակցման վրա, ինչն էլ իր հերթին ազդում է կրթության վրա: Մարդկանց՝ տնտեսապես և իրավապես կրթվածության պակասը հանգեցնում է աղքատության աճի, քանի որ շատերը չգիտեն իրենց իրավունքները, չեն կարողանում ճիշտ տնօրինել իրենց եկամուտները: Այս խնդիրը կարելի է լուծել՝ վերապատրաստված ուսուցիչների աշխատանքը այդպիսի գյուղերում խրախուսելով:

Աղքատության մակարդակի կրճատման համար անհրաժեշտ է երկարատև ռազմավարական ծրագիր: Կարճաժամկետ ծրագրերը կապահովեն միայն ժամանակավոր կայունություն: Եթե զարկ տանք տնտեսության աճին, ինչը, օրինակ, կարող ենք անել՝ հարկաբյուջետային քաղաքականության միջոցով ձեռնարկատիրության, բիզնեսի զարգացումը խթանելով, արդյունքում կավելանան ձեռնարկատիրությամբ և գործարարությամբ զբաղվողները, աշխատատեղերը, և, իհարկե, կնվազի աղքատությունը:

Աղքատության հաղթահարումը ներառված է մինչև 2025 թ. ՀՀ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում, որը նախատեսում է էականորեն կրճատել դրա մակարդակը:

**КЛАРА АКОПЯН**

## БЕДНОСТЬ, ЕЕ ОСНОВНЫЕ ПРИЧИНЫ И АНАЛИЗ ПОКАЗАТЕЛЕЙ В РА

***Ключевые слова:*** *бедность, безработица, доход, государство.*

*В этой статье представлены бедность, ее типы, показатели, ряд факторов, которые влияют на нее, и методы измерения, а также мы пытались провести анализ бедности и попытались найти некоторые решения для снижения ее уровня.*

*Это глобальная и насущная проблема, но она представлена в этой статье в Республике Армения. По данным Национальной статистической службы Армении, к 2016 году 29,4% населения являются бедными, а проблемы бедности и решения являются одними из основных целей нашей страны.*

KLARA HAKOBYAN

## POVERTY, ITS MAIN CAUSES AND ANALYSIS OF INDICATORS IN ARMENIA

*Key words:* *poverty, unemployment, income, state.*

*In this article we have presented the poverty,different types of it, its parameters,the factor that affect it, the methods of measuring it,and we have also tried to analyze the poverty and find some solutions to reduce the level of it.*

*It's a global and urgent problem, but in this article we have presented it within the territory of the Republic of Armenia. According to the National Statistical Service, in the year of 2016 more than 29,4% of the population of Armenia is poor, and the solution of the poverty and the problems which are connected with it is considered one of the most important object of our Republic.*